Սցենար 1. Ռոջեր. Ի՞նչը կարող է օգնել ինձ հաղթահարել դժվար ժամանակները (Մատթեոս 14.13-23)

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Մատթեոս 14.1-12-ից մենք սովորում ենք, որ Հերովդեսը գլխատեց Հովհաննես Մկրտչին: Պատկերացրեք, թե Հիսուսն ինչ կարող էր զգալ, երբ Նա լսեց, որ Իր ընկերը և զարմիկը գլխատվել էր:

Ուսումնասիրեք, թե Փրկիչն ինչ արեց Մատթեոս 14.13-23 հատվածներում և գտեք հետևյալ սկզբունքի ապացույցներ. **մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին՝ կարեկցանք ցուցաբերելով և ուրիշներին ծառայելով, նույնիսկ, եթե ինքներս դժվարությունների մեջ ենք**: Նկատի ունեցեք, որ «անապատ տեղը» (հատված 13-ում) նշանակում է առանձին տեղ, իսկ «կերակուրը» (հատված 15-ում) նշանակում է սնունդ:

- Ի՞նչ եք գտել այս հատվածներում, որն ապացուցում է այս սկզբունքը:
- Հիսուսն ի՞նչ արեց նույնիսկ այն բանից հետո, երբ իմացավ, որ Հովհաննես Մկրտիչը սպանվել էր:
- Տիրոջ անձնուրաց ծառայությունն ինչպե՞ս կարող է օգնել դժվարության միջով անցնող մարդուն:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարը ուսուցանել է, թե մենք ինչպես կարող ենք Քրիստոսանման բնավորություն զարգացնել.

> Բնավորությունը բացահայտվում է նաև այլ մարդկանց տառապանքը հասկանալու ուժի մեջ, երբ մենք ինքներս ենք տառապում, ուրիշների քաղցը նկատելու ունակության մեջ, երբ մենք ենք քաղցած, և ուրիշների հոգևոր հոգևարքի ժամանակ օգնության հասնելու և կարեկցանք ցուցաբերելու զորության մեջ, երբ ինքներս ենք գտնվում հոգևոր աղետի մեջ: Այսպիսով, բնավորությունը բացահայտվում է ուրիշներին տեսնելով և հասնելով այն ժամանակ, երբ բնական արձագանքը բնազդով պետք է լինի եսակենտրոն և դեպի ներս ուղղված:...
>
> ... Իսկապես, մեզ՝ մահկանացուներիս համար, հնարավոր է արդարակեցությամբ ստանալ հոգևոր պարգևներ, որոնք կապված են ուրիշներին օգնության հասնելու և այլ մարդկանց պատշաճ արձագանքելու կարողության հետ, ովքեր դիմակայում են նույն դժվարությանը կամ ձախորդությանը, որն անմիջականորեն և ուժգնորեն ճնշում է մեզ:
>
> Մենք չենք կարող ձեռք բերել այդպիսի կարողություն միայն կամքի ուժով կամ անձնական վճռականությամբ: Ավելի շուտ մենք «Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմածության և շնորհի» կարիքն ունենք և կախում ունենք դրանցից (2 Նեփի 2.8) (David A. Bednar, quoted in Sarah Jane Weaver, “Elder Bednar Addresses ‘the Character of Christ’ during 2019 Mission Leadership Seminar,” *Church News*, July 9, 2019):

Երբ պատրաստվեք կիսվել Ձեր սովորածով, մտածեք փորձառությունների մասին, երբ ծառայել եք ուրիշներին:

- Ձեր կարծիքով, Քրիստոսանման ծառայությունն ինչպե՞ս կարող մեզ օգնել մեր սեփական դժվարությունների ժամանակ:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Scenario 1: Roger*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.